ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի շնորհավորական ուղերձը եզդիական համայնքին Նոր տարվա՝ Մալաքե Թաուսի առթիվ
17.04.2019

Սիրելի՛ եզդի քույրեր և եղբայրներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեր վերածնունդը և նոր տարին խորհրդանշող այս գեղեցիկ տոնի՝ Մալաքե Թաուսի առթիվ:
Ապրելով կողք-կողքի՝ հայ և եզդի ժողովուրդները համատեղ ջանքերով բազմաթիվ հաջողությունների են հասել, մենք կիսել ենք միմյանց դժվարություններն ու ուրախությունները:
Որպես Արագածոտնի մարզպետ՝ ես իմ մշտական ուշադրության ներքո եմ պահում մարզում եզդիաբնակ համայնքների խնդիրները և առանձնահատուկ պատասխանատվությամբ եմ վերաբերում դրանց լուծմանը:
Միանալով ձեր ուրախությանը՝ մաղթում եմ, որ ձեր օջախներում միշտ առատություն, համերաշխություն, բարօրություն և երջանկություն տիրի:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Արագածոտնի մարզպետ
Դավիթ Գևորգյան